



ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹԻՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԷՆ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ի Մայր Աթոռ Ս. Էջմիածին

Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցույ առաջին խորհրդակցական համագումարը հաւաքուած Նիւ Եորք քաղաքին մէջ՝ մասնակցութեամբ 14 Եպիսկոպոսներու եւ շուրջ 40 Վարդապետներու եւ Քահանայից ոչ միայն Ամենայնի Միացեալ Նահանգաց եւ Եւրոպայի տարբեր շրջաններէն ինչպէս եւ Մերձատր Արեւելքէն եւ Արեւմուտքէն կու գայ իր նորոգեալ հաւատարմութիւնը յայտնելու Զերդ Սրբութեան, Հայ Եկեղեցույ Գերագոյն Պետին եւ Առաջնորդին:

Միաժամանակ զօրավիգ կը կանգնինք Մայր Աթոռ Ս. Էջմիածնին եւ լանոյր արժանատր Առաքելաշնորհ Գահակալին՝ դժուարին այս օրերուն, երբ Հայ Առաքելական Եկեղեցին եւ Հայկական Հանրապետութիւնը Մայր Հայրենիքի մէջ ճգնաժամային պահեր կ'ապրին: 1988 թուի ահաւոր երկրաշարժը եւ Արցախի պահանջատիրութիւնը ցնցեցին Հայաստան աշխարհն ու Հայ ժողովուրդը եւ առաջնորդեցին տնտեսական, քաղաքական եւ հոգեբանական մեծ տագնապի: Մենք մտահոգ ենք, որ կարգ մը աղանդաւորներ եւ յարանուանութիւններ օգտագործելով մեր դժուար կացութիւնը՝ մեծ եռանդով եւ թափով քարոզչութիւն կը կատարեն Հայ ազգի մէջ եւ կը ջանան անդամներ հեռացնել Հայ Եկեղեցիէն: Հայ Առաքելական Եկեղեցին է եւ կը մնայ Հայաստան աշխարհի եւ աշխարհասփիռ Հայութեան Եկեղեցին, որ կը մշակէ եւ կը խնամէ Էքիւմենիք եղբայրական յարաբերութիւններ բոլոր քոյր Եկեղեցիներու հետ:

Բոլոր մասնակիցներ սոյն համագումարի կ'աղօթեն Հայ Եկեղեցույ անսասանութեան, Հայաստան աշխարհի ապահովութեան եւ խաղաղութեան եւ Զերդ Սրբութեան արեւշատութեան համար:

**ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ
ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՄԻ**